ՅԱՌԱՋԱԲԱՆ

(Ա. հրատարակութեան - 2018)

ԱՆՍԱՀՄԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԵԱՆ ՁԳԱՑՈՒՄՈՎ

Բարոյագիտութեան վերաբերեալ որեւէ աշխատութեան, ուսումնական ձեռնարկի հանդիպելիս, երկու բոլորովին իրարամերժ՝ յոռետեսական ու լաւատեսական, զգացում եմ ապրում:

Նախ, զարմանում եմ, թէ ինչո՞ւ են այդ գրքերը գրւում, ո՞ւմ են հասցէագրւում, հեղինակները ի՞նչ նպատակ են հետապնդում, ինչի՞ վրայ են իրենց յոյսը դնում: Զարմանում եմ, որովհետեւ փիլիսոփաների ու իմաստունների (Սոկրատէս, Արիստոտէլ, Սպինոզա, Կանտ եւայլն), կրօնական ուսմունքների հիմնադիրների (Բուդդա, Կոնֆուցիոս, Մովսէս, Քրիստոս, Մուհամէդ եւայլն), բազմազան Էթիկական – բարոյագիտական տեսութիւնների հեղինակների ջանքերը մարդկանց «խելքի բերելու» ուղղութեամբ, մեղմ ասած, առ այսօր կարծես թէ ապարդիւն կամ անարդիւնք են անցել:

Եթէ մարդկութեան յառաջընթացը նկատելի է տեխնիկայի, տեխնոլոգիաների ոլորտներում, ապա նոյնը չենք կարող ասել բարոյական յառաջընթացի վերաբերեալ: Աւելին, համաշխարհայնացման (Globalisation) գործընթացներում խճճուած ժամանակակից աշխարհը յայտնուել է համընդհանուր ու համապարփակ ճգնաժամի մէջ, որն առաւել ցայտուն է դրսեւորւում բարոյագիտութեան – Էթիկայի – ոլորտում: Ի՞նչ ենք տեսնում այսօր. մի կողմից՝ աւանդական բարոյական արժէքների հեղինակազրկում կամ բարոյական աւանդոյթի արդիականացման ու ազատականացման կասկածելի քայլեր, իսկ միւս կողմից՝ բարոյական օրէնքների, կանոնների ու նորմերի արհա-մարհում, յատկապէս միջազգային յարաբերութիւնների ոլորտում: Այսօր շարունակւում են զանգուածային սպանութիւնները, էթնիկ փոքրամասնու-թիւնների կոտորածները, արիւնալի բախումները, ահաբեկչութիւնները, շրջափակումները, տնտեսական պատժամիջոցները եւ բռնութեան այլ ձևեր: